Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Հիմնադիր Թուֆենկյան փաունդեյշն, Ինկ.-ի Տնօրենների խորհրդի որոշմամբ՝ ___ հոկտեմբերի 31, 2003թ.-ին

Ջեյմս Ֆ. Թուֆենկյան
Հիմնադրի նախագահ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ «24» 12 2003թ.

գրանցման թիվ 222.160.00252

վկայական 03Ա 061842

պետական ռեգիստրի ղեկավար՝

Գուրգեն Սարգսյան

# ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՐԵՎԱՆ 2003

Is printed in __5__ copies only

COPY __1__

**CONFIRMED BY**

**The decree as of 31 October, 2003, of the Board of Trusties of The Tufenkian Foundation, INC. the founder of**

**TUFENKIAN CHARITABLE FOUNDATION**

____________________________________

James F. Tufenkian
President of the Founder

**REGISTERED BY**

**CENTRAL BODY OF THE STATE REGISTRY OF LEGAL ENTITIES OF THE REPUBLIC OF ARMENIA**
**"___" ______________, 2003**

registration number __________________

certificate _____ ____________________

head of the State Registry:

____________________________________

Gurgen Sargsyan

# TUFENKIAN CHARITABLE FOUNDATION

## C H A R T E R

YEREVAN 2003

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ (այսուհետ՝ Հիմնադրամ) իր հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, անդամություն չունեցող և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը ունի բարեգործական և այլ հանրօգուտ նպատակներ:

1.2 Հիմնադրամը հիմնադրվել է Թուֆենկյան Ֆաունդեյշն, Ինկ.-ի (ԱՄՆ իրավունքի ընկերություն, գրանցված է Նյու-Յորք նահանգի դեպարտամենտի կողմից 1996թ. դեկտեմբերի 13-ին, Գրանցման վկայական No. F961218000359, գտնվելու վայրը՝ Թուֆենկյան Իմպորտ/Էքսպորտ Վենչրս, Ինկ., 902 Բրոդվեյ, Նյու Յորք, ՆՅ 10010-6002, ղեկավար՝ Տնօրենների խորհրդի նախագահ Ջեյմս Ֆ. Թուֆենկյան) կողմից՝ Տնօրենների խորհրդի 31 հոկտեմբերի 2003թ. որոշմամբ:

1.3. Հիմնադրամը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.4. Հիմնադրամը գործում է օրինականության, կամավորության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով:

1.5. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.6. Հիմնադրամի հնարավոր շահառուներն են՝ իրենց նյութական և հոգևոր պահանջները ինքնուրույն ապահովել չկարողացող ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հաշմանդամները, ծնողազուրկ երեխաները, գործազուրկները; տարերային աղետներից, վարակիչ հիվանդություններից, համաճարակներից, պատերազմներից և արտակարգ այլ իրավիճակներից տուժած անձինք; գիտական, կրթական, արվեստի, գրականության և առողջապահության բնագավառի ոչ առևտրային կազմակերպությունները, կրոնական և կրթական հաստատությունները, ինչպես նաև այլ անձինք և ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց աջակցումը կնպաստի հիմնադրամի նպատակների իրագործմանը:

7. Հիմնադրամի հայերեն լրիվ անվանումն է՝ ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ:
Հիմնադրամի հայերեն կրճատ անվանումն է՝ ԹԲՀ:

Հիմնադրամի ռուսերեն լրիվ անվանումն է՝ БЛАГОТВАРИТЕЛЬНЫЙ ФОНД ТУФЕНКЯН:
Հիմնադրամի ռուսերեն կրճատ անվանումն է՝ БФТ:

## 1.GENERAL CONDITIONS

1.1. TUFENKIAN CHARITABLE FOUNDATION (hereinafter referred as Foundation) is a non profit organization, which has no membership and is founded upon the voluntarily granted property of its founder. The Foundation has charitable and other socially useful goals.

1.2. The Foundation is founded by the Tufenkian Foundation, INC. (registered by the USA law corporation, State of New York, Department of the State in December 13, 1996, Registration Certificate No. F961218000359, address: Tufenkian Import/Export Ventures, Inc., 902 Broadway, New York, NY 10010-6002, Head of the Corporation: Chairman of the Board of Directors James F. Tufenkian) according to the decree as of October 31st, 2003.

1.3. The Foundation operates according to the RA constitution, RA legislation and this charter.

1.4. The Foundation operates with the principles of legality, voluntarism, self-management and publicity.

1.5. The Foundation operates within the whole territory of RA, as well as in other countries, accordant to the legislation of that specific country.

1.6. The potential beneficiaries of the Foundation are: people who are not able to fulfill their material and mental needs themselves, including disabled people, children who have no parents, people who have suffered from natural disasters, infectious diseases, epidemic, war and other states of emergency; non commercial organizations, religious and educational institutions that are working in the areas of science, education, culture, literature and public health; and other bodies supporting to which will lead to fulfillment of Foundations goals.

1.7. The full name of the Foundation in Armenian language is: ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ.
The short name of the foundation in Armenian language is: ԹԲՀ.
The full name of the Foundation in Russian language is: БЛАГОТВАРИТЕЛЬНЫЙ ФОНД ТУФЕНКЯН.
The short name of the foundation in Russian language is: БФТ.

Հիմնադրամի անգլերեն լրիվ անվանումն է՝ TUFENKIAN CHARITABLE FOUNDATION:
Հիմնադրամի անգլերեն կրճատ անվանումն է՝ TCF:

The full name of the Foundation in English language is: TUFENKIAN CHARITABLE FOUNDATION.
The short name of the foundation in English language is: TCF.

1.8. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Թումանյան փողոց 21/1, բն. 5, Էլեկտրոնային փոստի հասցե՝ tufenk@netsys.am:

1.8. The official address of the Foundation is: Republic of Armenia, Yerevan, 21/1 Tumanian street, apt. 5, E-mail: tufemk@netsys.am.

1.9. Հիմնադրամի պաշտոնական լեզուն հայերենն է: Հիմնադրամի կողմից պաշտոնապես կարող են օգտագործվել նաև այլ լեզուներ՝ «Լեզվի մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Հիմնադրամը կարող է օգտագործել իր լրիվ և կրճատ անվանման օտարալեզու բարգմանություններով ցանկացած տարբերակ:

1.9. The official language of the Foundation is Armenian. The Foundation can officially use also other languages, according to RA Law on the Language. The Foundation can use its full or short name translated into other languages.

1.10. Հիմնադրամն ունի կնիք և ձևաթուղթ: Հիմնադրամի ձևաթուղթը նշում է պարունակում Հիմնադրամի անվանման, գտնվելու վայրի, կապի միջոցների համարների և հասցեների մասին: Հիմնադրամի կնիքը և ձևաթուղթը Հիմնադրամի մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում օգտագործվում են Հիմնադրամից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի ձևակերպման և վավերացման համար: Հիմնադրամի կնիքի և ձևաթղթի օգտագործումը չի կարող անվերապահորեն անհրաժեշտ համարվել՝ Հիմնադրամից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի իսկության և վավերականության հաստատման համար, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

1.10. The Foundation has its seal and letterhead. The letterhead of the Foundation contains the address, numbers and addresses of means of communication of the Foundation. The seal and the letterhead of the Foundation are used by the bodies and officials of the Foundation for legalization and validation of documents assigned to third parties. Usage of the seal and letterhead of the organization are not mandatory for legalization and validation of the documentation assigned to a third party, except of the cases provided by the RA legislation. In all cases the signature of authorized officials of the Foundation is the guarantor of the identity and validity of any document assigned to third parties.

1.11. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.11. The duration of Foundation's operation is not limited.

## 2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի նպատակներն են՝
2.1.1. իրենց նյութական և հոգևոր կարիքները ինքնուրույն հոգալ չկարողացող անձանց աջակցումը,
2.1.2. առողջապահության զարգացումը,
2.1.3. գյուղատնտեսության զարգացումը,
2.1.4. Հայաստանի Հանրապետությունում և այլուր աշխատատեղերի ստեղծման և գործազուրկների վերապատրաստման ճանապարհով սոցիալական օգնություն կարիք ունեցող անձանց աջակցումը,
2.1.5. գիտության, արվեստի, կրթության և գրականության բնագավառների զարգացումը, նշված բնագավառների կազմակերպությունների և կրթօջախների ստեղծմանն նպաստելը,
2.1.6. շրջակա միջավայրի պահպանությունը և բարեկարգումը,
2.1.7. պատմական, ճարտարապետական,

## 2.THE GOALS OF THE FOUNDATION

2.1. The goals of the Foundation are:
2.1.1. supporting people who are not able to fulfill their material and mental needs themselves,
2.1.2. development of the public health sector,
2.1.3. development of agriculture,
2.1.4. supporting people who need social aid, by creating working places and training the unemployed for a new profession in Armenia and elsewhere.
2.1.5. development of science, culture, education and literature, supporting to opening organizations and educational institutions in these areas,
2.1.6. environment protection and improvement,
2.1.7. protection and restoration of cultural and historical

մշակույթի և արվեստի հուշարձանների պահպանումը և վերականգնումը,

2.1.8. տարերային աղետների հետևանքով տուժած անձանց նյութական և այլ անհրաժեշտ օգնության ցուցաբերումը և տարերային աղետների հետևանքների վերացումը:

## 3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին հասնելու համար Հիմնադրամը կարող է`

3.1.1. իրականացնել մարդասիրական բնույթի բազմաբնույթ գործունեություն, այդ թվում ծրագրերի իրականացում սոցիալական, գյուղատնտեսության և առողջապահության բնագավառներում,

3.1.2. հովանավորել արվեստի, կրթության և գրականության բնագավառի կազմակերպություններին և կրթօջախներին,

3.1.3. նյութական, բարոյական և այլ օժանդակություն ցուցաբերել սակավ ապահովված ընտանիքներին և ֆիզիկական անձանց

3.1.4. նյութական օժանդակություն ցուցաբերել պատմական, ճարտարապետական, մշակույթի և արվեստի հուշարձանների պահպանմանն, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանման համար,

3.1.5. իր կանոնադրական խնդիրների շրջանակներում` սահմանված կարգով, մասնակցել պետական ծրագրերի իրականացմանը,

3.1.6. համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների` ներառյալ օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ,

3.1.7. իրականացնել Հայաստանում հիմնադրամների համար չարգելված և իր նպատակներից բխող ցանկացած այլ գործունեություն:

3.2. Հիմնադրամն անմիջականորեն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները`

3.2.1. կրթություն և առողջապահության բնագավառում բազմաբնույթ գործունեության կազմակերպում և ծառայությունների մատուցում` ներառյալ

monuments,

2.1.8. material and other support to people who have suffered from natural disasters, elimination of disaster consequences.

## 3. THE ACTIVITIES OF THE FOUNDATION, BUSINESS ACTIVITIES THAT CAN BE REALIZED BY THE FOUNDATION.

3.1. To reach the goals that are stated in this charter the Foundation has the right to:

3.1.1. run multidimensional humanitarian activities, including realization of projects in the areas of education, public health, agriculture and social welfare,

3.1.2. support the organizations and educational institutions that work in the areas of arts, education and literature,

3.1.3. provide material and other support to vulnerable families and persons,

3.1.4. provide financial means for the protection of cultural, historical, architectural monuments, and for the environment protection.

3.1.5. participate in realization of state projects, in the frames of goals provided by this charter,

3.1.6. cooperate with governmental bodies, local state authorities and other organizations, including foreign and international organizations,

3.1.7. any other activity that does not contradict to the RA law about foundations.

3.2. The Foundation may realize the following types of business activities according to RA legislation:

3.2.1. in the fields of education and health organizing various activities and providing services, including the organization of schools and training centers, chemist's shops and others,

կրթօջախների կազմակերպում, բժշկական և դեղատնային գործունեություն և այլն,

3.2.2. անկողնային պարագաների արտադրություն,

3.2.3. հասարակական սննդի, թեթև արդյունաբերության բնագավառի արտադրանքի արտադրություն և առևտուր, հասարակական սպասարկման բնագավառում ծառայությունների մատուցում,

3.2.4. առևտրային բնույթի կետերի կազմակերպում, ցանկացած բնույթի ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուր,

3.2.5. հուշանվերների արտադրություն և վաճառք, նկարների, քանդակների և արվեստի այլ գործերի վաճառք,

3.2.6. անշարժ և շարժական բնույթի գույքի վարձակալության կազմակերպում,

3.2.7. ցանկացած բնույթի ցուցահանդես-վաճառքների կազմակերպում, տպագրական և գովազդային գործունեություն,

3.2.8. գյուղատնտեսության բնագավառի ցանկացած բնույթի գործունեություն՝ ներառյալ հողագործություն, գյուղատնտեսական մթերքների արտադրություն և վերամշակում, անասնաբուծություն և ձկնաբուծություն, գյուղատնտեսական արտադրանքի վաճառք,

3.2.9. կաշվե և բրդյա իրերի արտադրանք և վաճառք,

3.2.10. փոխառությունների տրամադրում,

3.2.11. զանգվածային լրատվության միջոցների գործունեություն,

3.2.12. շինարարական գործունեություն:

3.3. Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից և նրանում նշված ժամկետում: Սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության տեսակներով զբաղվելու համար օրենքով լիցենզիա նախատեսված լինելու դեպքում՝ Հիմնադրամն իրականացնում է այդ գործունեությունը՝ պահանջվող որակավորում ունեցող մասնագետների միջոցով: Հիմնադրամի և նրա գործունեության հետ կապված աշխատող մասնագետների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2.2. production of bedding sets,

3.2.3. production and sales of goods in the fields of food, light industry, providing of public services,

3.2.4. establishment of wholesale and retails stores for any goods,

3.2.5. production and sales of souvenirs, sales of paintings, sculptures and other works of art,

3.2.6. giving for rent buildings and other assets,

3.2.7. organizing fairs, exhibitions and advertising campaigns, printing,

3.2.8. any activities in the field of agriculture, including farming, production, processing and sales of agricultural products, animal and fish breeding,

3.2.9. production of leather and wool products,

3.2.10. loan extension,

3.2.11. operation of mass media means,

3.2.12. construction works.

3.3. Provided by the law the Foundation may run some activities, only if it has appropriate license, from the license validation date up to date of its expiration. In case if the law requires a license for running the activities provided by this charter, the Foundation should run those activities with the help of specialists, that have appropriate qualification. Relations between the Foundation and specialists working in regard to its activities are regulated by Armenian Law.

## 4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում է լուծարման ավարտի պահից: Հիմնադրամը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ իր պետական գրանցման պահից: Հիմնադրամն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականությունները:

4.2 Հիմնադրամն ունի սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ: Հիմնադրամն իրեն պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում է իր հայեցողությամբ: Հիմնադրամի կողմից իր իրավունքների իրականացումից հրաժարվելը չի հանգեցնում այդ իրավունքների դադարմանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.3. Հիմնադրամը՝
- որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով,
- կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,
- կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,
- ունի ինքնուրույն հաշվեկշիռ,
- ունի կլոր կնիք՝ իր անվանման հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով, հաշվարկային հաշիվ՝ ՀՀ դրամով և արտարժույթով,
- իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը,
- իրավունք ունի ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ստանալ վարկեր,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին գործունեության վարման կարգը,
- իրավունք ունի ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը,
- իրավունք ունի նյութապես աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝

## 4. LEGAL CAPACITY AND RIGHTS OF THE FOUNDATION

4.1. The legal capacity of the Foundation starts from the moment of its state registration and stops when the process of its disbandment is over. The Foundation gets status of legal entity from the moment of its state registration. The Foundation has all the rights and carries all the responsibilities of a legal entity.

4.2. The Foundation has civil rights and responsibilities accordant to its activity goals, assigned by this charter. The Foundation implements its civil rights including the right to protect those rights at its discretion. The Foundation has those rights even if it declines from them, except of the cases provided by the law.

4.3. The Foundation:
- has its own property and is responsible with that property for its obligations,
- can purchase property; implement property and personal non-property rights and responsibilities,
- can be represented in the court both as plaintiff and defendant,
- has its balance,
- has its round seal with its name on it in Armenian, Russian and English languages; dram and foreign currency bank accounts,
- can purchase property, including securities, as well as manage and use the income gained from its property,
- can raise its financial resources itself, including taking loans,
- can choose the direction of its activities,
- can plan its activities itself,
- provided by the law and this charter, can support individuals and legal entities,

օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով,

- իրավունք ունի անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,
- հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ անձանցից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,
- ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ,
- ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքել պայմանագրեր,
- իրականացնել գիտական հետազոտություններ և ծրագրերի մշակումներ,
- իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

- can spread information about itself,
- can organize different mass media means,
- can get necessary information from governmental bodies and local state authorities for reaching Foundation's goals provided by this charter,
- can create separated subdivisions (branches, representative offices),
- can create commercial organization, or participate in it,
- can sign contracts with individuals and legal entities,
- can organize scientific researches and design projects,
- can run other activities that do not contradict to RA legislation.

4.4. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

4.4. The rights of the Foundation can be limited only in cases and in manner provided by the law.

4.5. Հիմնադրամը քաղաքացիական իրավունքները ձեռք է բերում ու իրականացնում իր կամքով և ի շահ իրեն: Հիմնադրամն ազատ է պայմանագրի հիման վրա սահմանելու իր իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրավունք:

4.5. The Foundation gets civil rights and implements them on its own free will and benefit. The Foundation is free to assign its rights and responsibilities, to stipulate any regulation with a contract that does not contradict to the law. The Foundation can protect its rights by all means that are not prohibited by the law.

4.6. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից: Հիմնադրամն իրավունք ունի զբաղվել միայն իր կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով, եթե օրենքով սահմանված կարգով անձամբ է իրականացնում ձեռնարկատիրական գործունեությունը:

4.6. The Foundation can run business activities only if it serves to reaching Foundation's goals provided by this charter. The Foundation can run business activities itself or create commercial organizations or participate in such organizations. The Foundation itself can run only the type of business activities that are provided by this charter and do not contradict to the law.

4.7. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

4.7. The Foundation, accordant to its charter and RA legislation, can be a member of an international or foreign non governmental organization.

## 5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

## 5. THE RESPONSIBILITIES OF THE FOUNDATION AND ITS FOUNDER

5.1. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորություններով, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամի հիմնադիրը պատասխանատու չէ Հիմնադրամի պարտավորությունների, իսկ Հիմնադրամը՝ իր հիմնադրի պարտավորությունների համար:

5.1. The Foundation does not carry any responsibility for the state obligations, just as the government does not carry responsibility for the obligations of the Foundation. The founder of the Foundation does not carry responsibility for the Foundation's obligations, and the Foundation does not carry responsibility for the obligations of its founder.

5.2. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

5.2. The Foundation is responsible for its obligations with all its property.

5.3. Հիմնադրամը պարտավոր է՝

- գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին, օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան.
- օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
- օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,
- իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

5.3. The Foundation should:

- act according to RA constitution, international treaties, laws and other legal acts and its charter,
- keep records and business accounting accordant to the law,
- provide information and reports to the state bodies in manner and cases provided by the law,
- carry out other responsibilities, provided by the law and other legal documents.

5.4. Անօրինական գործունեություն ծավալելու համար հիմնադրամը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

5.4. The Foundation and its officials carry the responsibility provided by the Law for running illegal activities.

## 6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

## 6. THE BOARD OF TRUSTEES OF THE FOUNDATION

6.1. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և Հիմնադրամի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին և հիմնադրամի տնօրենին առաջին անգամ նշանակում է հիմնադիրը: Հոգաբարձուների խորհրդի կազմը սահմանվում է երեք հոգի: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի

6.1. The highest administrative body and supervisor of the Foundation is The Board of Trustees of the Foundation. The founder appoint the first members of The Board of Trustees and the Director of the Foundation. The Board of Trustees has 3 members. The members of The Board of Trustees cannot be a member or representative of any other body of the Foundation.

անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ և ներկայացուցիչ:

6.2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից, իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.2. The chairman of The Board of Trustees is elected by the members of the board, by simple majority of votes.

6.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում՝ նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

6.3. The members of The Board of Trustees fulfill their responsibilities on a voluntary basis. The members of The Board of Trustees might get reimbursement for expenses made for fulfilling their responsibilities as a board member. The reimbursement procedure is to be defined by The Board of Trustees.

6.4. Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

6.4. The duration of authorities of a board member is not limited.

6.5. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

- նրա գրավոր դիմումի հիման վրա,
- նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/4-ով ընդունված որոշմամբ,

6.5. The authority of a member of The Board of Trustees stops:

- based on his/her application,
- upon the decision made by at least ¾ votes of board members, if a member does not fulfill his/her responsibilities in proper manner.

6.6. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած նաև նրա մահվան դեպքում:

6.6. The authority of the member of The Board of Trustees is considered to be stopped also in case of death of the member.

6.7. Հոգաբարձուների խորհրդի նոր անդամի ընտրության համար թեկնածու է առաջադրում հիմնադիրը, իսկ եթե հիմնադիրը գոյություն չունի կամ հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից 30 օրվա ընթացքում թեկնածու չի առաջադրում, ապա այդպիսի առաջարկություն կարող է անել հոգաբարձուների խորհրդի անդամներից յուրաքանչյուրը: Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում՝ Հիմնադիրները պարտադիր պետք է պատշաճ ձևով տեղեկացված լինեն այդ մասին:

6.7. Candidates for new member of The Board of Trustees are suggested by the founder. In case if there is no Founder or no candidate is suggested within 30 days after a board member vacancy is opened, any of the board members can make such suggestion. The Founder should be informed about the opened vacancy of a board member, no later than in 10 days after the vacancy is opened.

6.8. Հոգաբարձուների խորհրդի նոր անդամը ընտրվում է հոգաբարձուների խորհրդի կողմից՝ նախկին անդամի լիազորությունների դադարման օրվանից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում՝ հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 2/3-ով ընդունված որոշմամբ: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի ստացել ընտրվելու համար ձայների անհրաժեշտ քանակ, ապա առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջև անցկացվում է

6.8. The new member of The Board of Trustees is elected by the board upon 2/3 of the board member votes, no later than within 60 days after the authorities of the old member has stopped. If none of the candidates gets the necessary votes, then a second election should be held for the 2 candidates with maximum votes. The candidate who gets more votes, but not less then 51% of total number of the votes, is considered elected.

կրկնակի քվեարկություն: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է ձայների առավելագույն քանակ, սակայն ոչ պակաս, քան հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների կեսից ավելին:

6.9. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերը հրավիրվում են տարեկան առնվազն մեկ անգամ՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից, որը սահմանում է նաև նիստերի անցկացման ժամկետները և ձևը: Նիստի օրակարգը բաժանվում է հոգաբարձուների խորհրդի անդամներին և հիմնադրին ոչ ուշ, քան նիստից 15 օր առաջ:

6.9. The meetings of The Board of Trustees are held at least once a year, and are invited by the president of the board, who defines the dates and form of the meeting. The agenda of the board meeting should be submitted to board members no later than 15 days before the meeting day.

6.10. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի իրավասության հարցերն են՝

6.10. The Board of Trustees is empowered to:

6.10.1. Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,

6.10.1. approve strategic program(s) of the Foundation,

6.10.2. Հիմնադրամի կողմից իրականացվելիք բարեգործական ծրագրերի հաստատումը,

6.10.2. approve the charitable projects to be realized by the Foundation,

6.10.3. Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

6.10.3. approve the budget changes, annual budget, annual financial and activity reports of the Foundation,

6.10.4. Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

6.10.4. approve the regulation of Foundation's property management,

6.10.5. Հիմնադրամի բանկային հաշիվների տնօրինման և կառավարման կարգի հաստատումը,

6.10.5. approve the regulation of Foundation's bank accounts management,

6.10.6. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

6.10.6. adopt the decision about reorganization of the Foundation,

6.10.7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ընտրությունը և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

6.10.7. elect new members of the board and stop prematurely the authorities of a board member,

6.10.8. Հոգաբարձուների խորհրդի նախագահի և հիմնադրամի տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

6.10.8. adopt a decision about elections of the board president and Foundation's director, and stop prematurely their authorities,

6.10.9. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

6.10.9. adopt a decision about making changes and additions in the charter of the Foundation, and approving the new charter,

6.10.10. տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

6.10.10. adopt the decisions about organizing or participating in commercial organizations, founding separate sub-divisions and institutions, and approving their charters,

6.10.11. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

6.10.11. supervise the financial activities of the Foundation,

6.10.12. յուրաքանչյուր տարվա ավարտից հետո Հիմնադրամի տնօրենի հաշվետվությունների լսումը.

6.10.12. review Foundation's Director's reports by the end of each year,

6.10.13. իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

6.10.13. control the process of realization of the board's decisions,

6.10.14. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը և նրա վարձատրության չափի որոշումը,

6.10.15. օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

6.10.14. select an Auditor for the Foundation and assign the amount of its reward.

6.10.15. The Board of Trustees also has cognizance of other activities, which no other body of the Foundation has, provided by the law and/or this charter.

6.11. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված առանձին դեպքերի:

6.11. The Board of Trustees realizes its activities through board meetings. The board meeting is legitimate only if more than half of the board members are present. The decisions of The Board of Trustees are made upon majority of votes of present members, except of the cases provided by this charter.

6.12. Հոգաբարձուների խորհրդի նախագահի, Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի վերակազմակերպման և կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելու մասին որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.12. Decisions about the election or discharge of the board president and the director of the Foundation, as well as decisions about reorganization of the Foundation, making changes and additions in its charter, and approving the new charter, are made upon the majority of votes of the total number of the board members.

6.13. Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

6.13. If a question about property or other interests of one of the board members or related person (parent, spouse, child, brother, sister, spouse's parent, child, brother or sister) is discussed on the board meeting, that board member can not vote.

6.14. Հոգաբարձուների խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է իր կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

6.14. The Board of Trustees organizes its works according to the assigned agenda.

6.15. Հոգաբարձուների խորհրդի նիստերում նրա յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

6.15. On the meetings each member of the board has one vote.

6.16. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն ընտրվում է հոգաբարձուների խորհրդի կողմից :

6.16. The president of The Board of Trustees is elected by the board.

6.17. Հոգաբարձումների խորհրդի նախագահը՝

6.17.1. կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները,

6.17.2. գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

6.17.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:

6.17. The president of The Board of Trustees:

6.17.1. organizes the works of The Board of Trustees,

6.17.2. invites and presides over the board meetings,

6.17.3. organizes the recording of the board meetings.

6.18. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները՝հոգաբարձուների

6.18. In case of absence of the president of the board, upon the decision of the board one of the board members fulfills president's duties.

խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

6.19. Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից, վերջինիս համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռախոսակապի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

6.19. The board meetings can be invited by the president of the board also upon the request of 1/3 of board members, within 30 days after getting the request. If the president of the board does not invite a board meeting in the mentioned period, the meeting can be invited by the board members. The board meetings can be held also using telephone and other means of communication.

## 7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

## 7. THE MEMBERS OF THE BOARD OF TRUSTEES

7.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամն իրավունք ունի՝

- 7.1.1. հիմնադրամի աշխատանքները բարելավելու նպատակով նրա մարմիններին ներկայացնել առաջարկություններ,
- 7.1.2. սպառիչ տեղեկատվություն ստանալ հիմնադրամի գործունեության մասին,
- 7.1.3. ազատ դուրս գալ հոգաբարձուների խորհրդից:

7.1. The member of The Board of Trustees has the right to:

7.1.1. make suggestions to the bodies of the Foundation, in order to improve Foundation's activities,

7.1.2. get full information about Foundation's activities,

7.1.3. leave The Board of Trustees voluntarily.

7.2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամը պարտավոր է՝

- 7.2.1. հոգ տանել հիմնադրամի հեղինակության բարձրացման համար,
- 7.2.2. աջակցել հիմնադրամում ներդրումների համալրմանը:

7.2. The member of The Board of Trustees is responsible for:

7.2.1. taking care about raising the authority of the Foundation,

7.2.2. supporting the Foundation's funds refurbishment.

7.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

7.3. The members of The Board of Trustees fulfill their responsibilities on voluntary basis.

## 8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԸ

## 8. THE DIRECTOR OF THE FOUNDATION

8.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է հիմնադրամի տնօրենը: Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և կանոնադրությամբ հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

8.1. The director of the Foundation is responsible for managing the day-to-day activities of the Foundation. The director of the Foundation is empowered to solve all the managerial issues, except of the issues that are to be solved by the Board of Trustees, provided by the law or this charter.

8.2. Հիմնադրամի տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

8.2. The director of the Foundation is responsible for realizing the decisions of the Board of Trustees.

8.3. Տնօրենը ընտրվում և պաշտոնից ազատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից: Տնօրենի պաշտոնում առաջին անգամ նշանակում կարող է կատարել նաև հիմնադիրը:

8.3. The director is elected and discharged by The Board of Trustees. For the first time, the founder also can appoint the director of the Foundation.

8.4. Հիմնադրամի տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի նախագահը կամ հոգաբարձուների խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

8.4. The rights and responsibilities of the director are assigned by the law, the charter of the Foundation and the contract signed with him/her. The president of The Board of Trustees or other authorized person should sign the contract as a Foundation representative.

8.5. Հիմնադրամի տնօրենը՝

8.5.1. հոգաբարձուների խորհրդի սահմանած կարգով տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից,

8.5.2. ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

8.5.3. գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

8.5.4. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

8.5.5. բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

8.5.6. հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

8.5.7. հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի ֆինանսա-տնտեսական գործունեության և այլ տարեկան հաշվետվություններ,

8.5.8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

8.5.9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին,

8.5.10. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

8.5.11. հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի կողմից իրականացվելիք բարեգործական ծրագրերի նախագծերը,

8.5.12. իր իրավասության սահմաններում և հոգաբարձուների խորհրդի ցուցումներին համապատասխան իրականացնում է այլ գործառույթներ:

8.5. The director of the Foundation:

8.5.1. manages the property of the Foundation, including financial resources, signs contracts in the name of the Foundation, according to the regulation adopted by The Board of Trustees,

8.5.2. represents the Foundation in the Republic of Armenia and other countries,

8.5.3. acts without a power of attorney, gives such documents,

8.5.4. signs contracts, including labor contracts.

8.5.5. opens Foundation's current and other bank accounts (including foreign currency accounts),

8.5.6. submits to The Board of Trustees for approval: the internal code of the foundation, charters of separate sub-divisions, institutions and commercial organizations founded by the Foundation, administrative-organizational structure of the Foundation, staff-list,

8.5.7. submits to The Board of Trustees the annual activity, financial and other reports of the Foundation, to be reviewed,

8.5.8. adopts orders, commands and instructions within his/her authorities, and supervises their realization.,

8.5.9. hires and discharges Foundation's employees,

8.5.10. implements encouragement prizes and administrative penalties towards the employees of the Foundation,

8.5.11. submits to the Board of Trustees for approval the charitable projects that are to be realized by the Foundation,

8.5.12. realizes other activities within the scopes of his/her authorities and the instructions of The Board of Trustees.

8.6. Հիմնադրամի տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ:

8.6. The director of the Foundation can hold other paid positions, only having the consent of The Board of Trustees.

8.7. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով՝ ներառյալ դա կիրառելով որպես պատասխանատվության միջոց:

8.7. Provided by the law, the charter of the Foundation and the contract executed between The Board of Trustees and the Director, the Board of Trusties has the right to terminate the mentioned contract with the director of the Foundation, using this also as an administrative penalty.

## 9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

## 9. THE SEPARATE SUB-DIVISIONS AND INSTITUTIONS OF THE FOUNDATION

9.1. Հիմնադրամն իրավունք ունի օրենքին և իրավական այլ ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ: Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է այդ երկրների օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

9.1. Provided by the law and other legal acts, the Foundation has the right to found separate sub-divisions: branches and representative offices, as well as institutions. Founding of separate sub-divisions and institutions in foreign countries is to be done accordant to the legislation of that specific country, except of the cases provided by the international treaties signed by RA.

9.2. Ներկայացուցչություն է համարվում Հիմնադրամի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է Հիմնադրամի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

9.2. A representative office is considered the separate sub-division of the Foundation located outside the place where the Foundation is located, which represents the interests of the Foundation and conducts their protection.

9.3. Մասնաճյուղ է համարվում Հիմնադրամի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:

9.3. A branch is the separated sub-division of the Foundation located outside the place where the Foundation is located and conducting all or part of the Foundation's activities, including the activities of a representation.

9.4. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը պետք է պարունակի Հիմնադրամի անվանումը:

9.4. The name of a separated sub-division or institution should contain the name of the Foundation.

9.5. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Հիմնադրամի տնօրենի կողմից ու գործում են նրա կողմից տրված լիազորագրի հիման վրա:

9.5. The managers of the representative offices, branches and institutions are appointed by the director of the Foundation, and act upon the power of attorney given by him/her.

9.6. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները հաշվառվում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

9.6. The separated sub-divisions and institutions are registered according to the order stipulated by the legislation.

## 10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

## 10. THE PROPERTY OF THE FOUNDATION

10.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

10.1. The Foundation has property of its own and is responsible with that property for its obligations

10.2. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից Հիմնադրամին փոխանցվող 20532692,02 (քսան միլիոն հինգ հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր իննսուներկու դրամ երկու լումա) ՀՀ դրամ արժեքով գույքը, ինչպես նաև 10000 (տաս հազար) ԱՄՆ դոլար գումարը:

10.2. The starting property of the Foundation are the property with a value of AMD 20532692,02 (Twenty Million Five Hundred Thousand Thirty Two Six Hundred Ninety Two Drams and Two Lumas), as well as the amount of USD 10000 (ten thousand) provided by the founder.

).3. Հիմնադիրների կողմից հիմնադրամին հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

10.3. The assets conveyed to the Foundation by the founder is the property of the Foundation. The Foundation uses those assets and funds for reaching the goals provided by this charter.

).4. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

- 10.4.1. հիմնադրի ներդրումը և հատկացրած միջոցները,
- 10.4.2. ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.
- 10.4.3. դրամական մուտքերը պետական բյուջեից,
- 10.4.4. դրամաշնորհները,
- 10.4.5. Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ գործող տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
- 10.4.6. հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),
- 10.4.7. օրենքով չարգելված այլ միջոցները:

10.4. Sources of property for the Foundation can be:

- 10.4.1. the investments and donations of the founder,
- 10.4.2. the donations of individuals and legal entities, including foreign citizens and legal entities, international organizations.
- 10.4.3. financial incomes from the state budget,
- 10.4.4. monetary donations,
- 10.4.5. financial means gained from business activities of the Foundation or business activities run by companies that the Foundation has founded or is participating in,
- 10.4.6. endowments: means gained through events (entertaining and other events) organized especially for gathering funds.
- 10.4.7. Other sources that are not prohibited by the law.

10.5. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, Հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի: Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից որոշակի նպատակներով Հիմնադրամին տրված նվիրաբերությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով միայն նվիրաբերողի համաձայնությամբ: Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հայտարարվել էր նախապես:

10.5. The property of the Foundation can not be used for the welfare of its founder, members of the bodies of Foundation as well as the staff of the Foundation, except of the salaries and reimbursement of expenses that the members of Foundation's bodies made for fulfillment of their responsibilities. The donation that is made by an individual or a legal entity for a special purpose can be used for other purposes only having the permission of the donator. Means gained from endowments can be used only for the purpose that was announced earlier.

1ւ.6. Հիմնադրամի ծախսերն են՝

10.6.1.կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը,

10.6.2. վարչակառավարչական ծախսերը:

10.6. The expenses of the Foundation are:

10.6.1. the expenses made for reaching the goals provided by this charter,

10.6.2. administrative-organizational expenses.

10.7. Կանոնադրական նպատակների համար նախատեսված ծախսերը հիմնադրամի բյուջեում պետք է արտահայտված լինեն առանձին՝ ըստ նպատակների (ծրագրերի), օգտագործման եղանակների և (կամ) սուբյեկտների, որոնց միջև բաշխվելու են միջոցները: Այդ ծախսերում ներառվում են նաև հիմնադրամի գույքի պահպանման, ավելացման և վերանորոգման,

10.7. The expenses assigned for reaching the goals provided by this charter, should be mentioned in Foundation's budget separately, by their purposes (projects), directions of expenditure and/or subjects among which the amount will be divided. These expenses include also amount required for preservation, reinforcement and repairing of Foundation's property, as well as utility, electricity and reconstruction expenses.

ինչպես նաև կապի, կոմունալ-կենցաղային, էլեկտրաէներգիայի, շինարարության ծախսերը:

8. Վարչակառավարչական ծախսերն իրենց մեջ ներառում են հիմնադրամի կառավարման, հիմնադրամի աշխատողների աշխատավարձի, ինչպես նաև հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերը: Վարչակառավարչական ծախսերի գումարի չափը չպետք է գերազանցի Հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերի 20 տոկոսը՝ միաժամանակ հաշվի առնելով Բարեգործության մասին ՀՀ օրենքի պահանջները:

10.8. The administrative-organizational expenses include: expenses required for the management of the Foundation, for paying salaries to the staff, as well as for reimbursement of expenses to members of Foundation's bodies, which they have made for fulfillment of their responsibilities. The amount of administrative-organizational expenses should not be more than 20 % of total expenses of the Foundation, taking into consideration also the requirements of RA law on charity.

.9. Հիմնադրամի միջոցները ձևավորվում են կամավորության սկզբունքով: Հիմնադրամի միջոցների կազմավորմանը կարող են մասնակցություն բերել բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրավամբ շահագրգռված են Հիմնադրամի նպատակների իրականացման խնդրով: Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր տարեկան եկամուտներից կարող է միջոցներ հատկացնել Հիմնադրամին: Հիմնադրամին հատկացումներ կարող են կատարվել նաև միանվագ նվիրատվության, ժառանգման, փոխանցումների և այլ ձևերով: Խոշոր միանվագ մուծումների դեպքում Հիմնադրամի կողմից կարող են իրականացվել անվանական ծրագրեր:

10.9. The funds of the Foundation are formed on the bases of voluntarism. All those individuals and legal entities, who are interested in the goals of the Foundation, can make donations from their annual income. Donations can be made also as a single endowment, inheritance, transfers and in other forms. In case of big endowments, Foundation can realize also a special project.

10.10. Հիմնադրամն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում իրավունք ունի իր գույքը օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

10.10. Provided by the law and this charter, the Foundation at its discretion possess, use and dispose of property belonging to it, including the right to sell its property to third parties, to transfer them the rights to possess, use and dispose of its property, to pledge the property or dispose it in another way.

0.11. ՀՀ տարածքում հիմնադրամի սեփականությունը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո:

10.11. Within the territory of RA the property of the Foundation is protected by RA law.

12. Հիմնադրամի սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

10.12. The property of the Foundation can be confiscated only through the court, in cases provided by the law.

0.13. Հիմնադիրների, ինչպես նաև այլ անձանց կողմից Հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

10.13. The assets conveyed to the Foundation by the founder as well as donated to it by the other entities is the property of the Foundation. The Foundation should use its property accordant to the goals provided by this charter.

## 11. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

## 11. THE REORGANIZATION AND DISBANDMENT OF THE FOUNDATION

1.1. Հիմնադրամի վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը) կատարվում է օրենքով և սույն

11.1. The reorganization of the Foundation (merger, accession) should be conducted in order provided by the law

կանոնադրությամբ նախատեսված կարգով, իսկ լուծարումը՝ դատական կարգով:

11.2. Հիմնադրամի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

11.3. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

11.4. Հիմնադրամը կարող է լուծարվել եթե՝
- 11.4.1. Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորություն իրական չէ,
- 11.4.2. հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների անհրաժեշտ փոփոխություններ,
- 11.4.3. Հիմնադրամի կողմից իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելու դեպքում,
- 11.4.4. օրենքով նախատեսված այլ դեպքերում:

11.5. Հիմնադրամի լուծարման դեպքում՝ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, նրա գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին՝ ներառյալ այն Հիմնադրամին համանման նպատակներ իրականացնող՝ հիմնադրի որոշած անձին/անձանց փոխանցելով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է ՀՀ պետական բյուջե:

and this charter, and the disbandment of the Foundation can be realized only in legal form.

11.2. The disbandment of the Foundation means that the Foundation stops its activities without passing its rights and responsibilities to another entity as legal succession.

11.3. Only the court can make the decision about disbandment of the Foundation, upon the application of interested individuals (legal enteritis).

11.4. The Foundation can be disbanded if:
- 11.4.1. the property of the Foundation is not enough for realization of its activities and there is no possibility of getting the necessary property or funds,
- 11.4.2. it is not possible to reach the goals of the Foundation and is not possible to make necessary changes of those goals,
- 11.4.3. the Foundation has deviated from its goals provided by this charter.
- 11.4.4. In other cases provided by the law.

11.5. In case of disbandment, after the satisfaction of claim owners, the property of the Foundation goes to realization of its goals, including also to individuals or legal entities, defined by the founder, which are working on realization of similar goals; in case if this is not possible, the property goes to RA state budget.

RA MINISTRY OF JUSTICE, STATE REGISTER DEPARTMENT